5. Поглощение глюкозы и пировиноградной кислоты мозгом в больших количествах при возбуждении и в меньших при торможении является специфической чертой его деятельности. В отношении поглощения мозгом и мышечной тканью глюкозы, пировиноградной кислоты при возбуждении и глюкозы при торможении имеется параллелизм.

Кафедра биохимии

Ереванского медицинского института

Поступило 15 I 1957

Գ. Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԳԼՅՈՒԿՈՉԱՅԻ, ՊԻՐՈՆԱՎՈՂԱԹԹՎԻ ԿԼԱՆՈՒՄԸ ՈՒՂԵՂԻ ՈՒ ՄԿԱՆԱՅԻՆ
ՀՅՈՒՍՎԱՍՔԻ ԿՈՂՄԻՑ ԵՎ ԱՐՅԱՆ ՀՈՍՔԻ ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆԸ
ՈՒՂԵՂՈՒՄ ՄՆՆԴԱՅԻՆ, ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՄՆՆԴԱՅԻՆ ԳՐԴՄԱՆ ՈՒ
ՆԵՐՔԻՆ ԱՐԳԵԼԱԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Ա մ ֆ ո ֆ ո ս մ

Գլխավորագրի և պիրոխադոգաթթվի երակ-զարկերակային տարբերությամբ լինումը, հաշվի առնելով արյան հոսքի արագությունը ուղեղում, մեր առջև խնդիր է դրվել ուսումնասիրել, թե ինչպես է փոխվում նրանց

կլանումը ուղեղի և մկանային հյուսվածքի կողմից՝ կեղևային գրգման ու արգելակման ժամանակ: Արյան հոսքի արագությունը որոշվել է ֆոսֆորի իզոտոպի (P_{32}) միջոցով: Կատարված հետազոտությունները բերում են հետևյալ եզրակացություններին՝

1. Մենդային (շաքարային ծանրաբեռնվածություն) և պայմանական անդային գրգման ժամանակ, չնայած արյան հոսքի արագության մեծացմանը ուղեղում, ուղեղը և մկանային հյուսվածքը խտենալով կերպով կլանում են գլյուկոզա ու պիրոխազոդաթթու, քնդ սրում նշված նյութերի կլանումը ուղեղի կողմից տեղի է ունենում ավելի մեծ քանակներով, քան մկանային հյուսվածքի կողմից:

2. Ներքին արգելակման դարգացման ժամանակ (պայմանական օեֆլեքսի մարում) արյան հոսքի արագությունը ուղեղում աստիճանաբար դանդաղում է: Գլյուկոզայի և պիրոխազոդաթթվի կլանումը ուղեղի ու մկանային հյուսվածքի կողմից փոքրանում է, իսկ սրոշ գեպերում նրանք գլյուկոզան անջատում են արյան մեջ: Ուղեղը, ի տարբերություն մկանային հյուսվածքի, որպես կանոն պիրոխազոդաթթու կլանում է նաև արգելակման ժամանակ:

3. Ներքին արգելակման ժամանակ, ուղեղում արյան հոսքի արագության դանդաղեցմանը զուգընթաց, անպայմանական գրգռիչը (շաքարային ծանրաբեռնվածություն) չի բարձրացնում գլյուկոզայի քանակը արյան մեջ և նրա կլանումը ուղեղի ու մկանային հյուսվածքի կողմից: Ուղեղը և մկանային հյուսվածքը շարունակում են քիչ կլանել և երբեմն էլ գլյուկոզա անջատել արյան մեջ:

4. Արտարգելակման ժամանակ աստիճանաբար մեծանում է գլյուկոզայի ու պիրոխազոդաթթվի երակ-զարկերակային տարբերությունը և արյան հոսքի արագությունը ուղեղում:

5. Գլյուկոզայի և պիրոխազոդաթթվի կլանումը ուղեղի կողմից մեծ քանակներով գրգման ժամանակ և քիչ քանակներով արգելակման ժամանակ հանգիստանում է նրա դործունեության բնորոշ հատկանիշը: Ուղեղի և մկանային հյուսվածքի կողմից գլյուկոզայի ու պիրոխազոդաթթվի կլանման միջև գրգման ժամանակ և գլյուկոզայի կլանման միջև արգելակման ժամանակ՝ գոյություն ունի նմանօրինակություն:

Л И Т Е Р А Т У Р А

1. Б у н я т я н Г. Х. и др. Некоторые особенности условнорефлекторной регуляции обмена веществ. Тез. докл. VIII Всес. съезда физиол., биох., фармак., стр. 94—96, 1955.
2. Б у н я т я н Г. Х. Влияние коркового возбуждения и торможения на обмен веществ. Тез. докл. совещ. по пробл. азотистого обмена и нервной регуляции обмена веществ, стр. 16—23, Ереван, 1954.
3. Б у н я т я н Г. Х. Поглощение мозгом глюкозы и пировиноградной кислоты при различных его функциональных состояниях. Тезисы докладов II конф. по биох. нерв. системы. Изд. АН УССР, 7, 1957.
4. П е т р у н ь к и н М. Л. и П е т р у н ь к и н а А. М. Определение сахара. Практическая биохимия, стр. 181—188, 1951.
5. Х а ч а т р я н Г. С. Сдвиги некоторых сторон углеводного обмена при пищевом, условнорефлекторном возбуждении и условном торможении. Тез. докл. совещ. по пробл. азотистого обмена и нервной регуляции обмена веществ. Изд. АН АрмССР, стр. 67—71, 1954.

6. Хачатрян Г. С. Поглощение мозгом и мышечной тканью глюкозы и пировиноградной кислоты при пищевом, условнопищевом возбуждении и внутреннем торможении. Известия АН АрмССР (биол. и сельхоз. науки). т. IX, II, стр. 13—26, 1956.
7. Хачатрян Г. С. Кортиковая регуляция содержания глюкозы и пировиноградной кислоты при алиментарной гипергликемии. Диссерт., Ереван, 1957.
8. Friedman Th. J. of Biol. Chem. 147, 415, 1943.
9. Gärtner C., Wagner J. Wien. Med. Wochenschr., 19, 5, 601, 1887.

Չ. Ս. ՉԵՐԳԵՋՅԱՆ

ՑԱՎԱՅԻՆ ՈՒ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՑԱՎԱՅԻՆ ԳՐԳՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ԱՐՅԱՆ ՖՈՍՖԱՏՆԵՐԻ ԵՎ ՖՈՍՖՈՐԻ ԱՐՏԱԶԱՏՄԱՆ ՎՐԱ

Բազմաթիվ ավյալներ վկայում են այն մասին, որ ցավն օրգանիզմում առաջ է բերում մի շարք փոփոխություններ, ընդ որում նաև ֆոսֆորային միացությունների փոխանակության տեղաշարժեր (Լ. Ա. Օրբելի [1], Է. Հ. Հասրաթյան [2], Հ. Խ. Բունյաթյան [3], Հ. Խ. Բունյաթյան, Յու. Հ. Վեչեկ և Հ. Վ. Մատինյան [4], Գ. Տ. Ադոնց, Վ. Բ. Եղյան և Ա. Ս. Հովհաննիսյան [5], Դ. Գրոդզենսկի և Լ. Իլինա [6], Ա. Ս. Բերնշտեյն [7] և ուրիշները)։ Մենք (Չ. Ս. Չերգեջյան, [8]) ցույց ենք տվել, որ՝

1. Ռադիոֆոսֆորի ներարկումից 4 ժամ հետո նա տարաբաշխվում է օրգաններում տարբեր քանակությամբ։ Հիմնականում նա կլանվում է այն օրգանների կողմից, որոնք աչքի են ընկնում նյութափոխանակության բարձր մակարդակով։ Ամենից շատ նա կլանվում է լյարդի, երիկամների կողմից, ապա ըստ հերթականության, ոսկրային հյուսվածքի, փայծաղի, սրտի, կմախքային մկանների և, ամենից քիչ, գլխուղեղի կողմից։

2. Ցավային գրգռի ազդեցության տակ վերոհիշյալ բոլոր օրգաններն ալելի մեծ քանակությամբ ռադիոֆոսֆոր են կլանում, բացառություն են կազմում երիկամները՝ ցավը նվազեցնում է ռադիոֆոսֆորի կլանումը նրանց կողմից։

3. Ռադիոֆոսֆորի ներարկումից 28 ժամ հետո լյարդի, երիկամների, սրտի, փայծաղի, ոսկրային հյուսվածքի կողմից կլանված ռադիոֆոսֆորները, 4 ժամվա համեմատությամբ, պակասում է, բացառություն են կազմում մկանային հյուսվածքը և գլխուղեղը, որտեղ ռադիոֆոսֆորի քանակն ավելանում է։ 28 ժամ հետո ռադիոֆոսֆորի քանակության տեսակետից առաջին տեղը բռնում է ոսկրային հյուսվածքը, ապա հերթականությամբ՝ լյարդը, փայծաղը, երիկամները, սիրտը, մկանային հյուսվածքը և, վերջում՝ գլխուղեղը։

4. Ցավի ազդեցության տակ ռադիոֆոսֆորի տարաբաշխումը օրգաններում 28 ժամ հետո կրում է նույն բնույթը, այսինքն բոլոր օրգանները կլանում են ալելի մեծ քանակությամբ ռադիոֆոսֆոր, քան կոնտրոլ փորձերում։ Այստեղ ևս բացառություն են կազմում երիկամները, որտեղ ռադիոֆոսֆորի քանակությունը նվազում է։

Նկատի ունենալով ֆոսֆորային միացությունների կարևոր նշանակությունը անոթազրատների, ճարպերի և սպիտակուցների փոխանակության մեջ, հետաքրքրական էր ուսումնասիրել, ինչ ինչ փոփոխություն են կրում արյան մեջ ֆոսֆատների տարբեր ֆրակցիաները և ինչպես է փոխվում անօրգանական ֆոսֆատի քանակը մեզի մեջ ցավի ազդեցության տակ։ Փորձերը կատարվել են 6 շան վրա, որոնցից երեքի միզածորանները մեկուսացվել և կարվել էր որովայնի պատին (ըստ Պավլովի և Օրբելի)։

Փորձերը կատարվել են երկու վարիանտով: Առաջին վարիանտի փորձերում մեր նպատակն է եղել պարզել ցավի ազդեցությունը մեղի միջոցով ուղիոֆոսֆորի արտադրության վրա: Դիտարկող ավելացնելու նպատակով շանը փորձից առաջ տրվել է 0,5 լ կաթնաջուր (0,25 լ կաթ + 0,25 լ ջուր): Շնե-
րի կերակրման օրական նորման եղել է՝ հաց 700 գ, միս — 100 գ, կաթ — 500 գ: Մեզը հավաքել ենք կաթնաջուրը տալուց կես ժամ հետո, ժամա-
նակի հետևյալ ինտերվալներում՝ 10, 10, 5, 15 և 20 րոպեների ընթացքում: Դիտարկողի նորմալ ֆոնը պարզելուց հետո գրվել են կոնտրոլ փորձեր: Կաթ-
նաջուրը տալուց կես ժամ հետո հետևի վերջավորության երակի մեջ (V Sa-
lena) ներարկել ենք ռադիոակտիվ ֆոսֆոր՝ 4 $\mu\text{C}/\text{կգ}$ դոզայով: Մեղի հա-
վաքման կարգը եղել է նույնը: Մեղի յուրաքանչյուր առանձին քանակից
վերցրել ենք 0,1 մլ՝ ռադիոֆոսֆորի ակտիվությունը որոշելու համար:
Ռադիոֆոսֆորի ակտիվությունը որոշել ենք Գեյգեր—Մյուլլերի հաշվիչով
«Ծ» — տիպի սարքավորման միջոցով: Նույն հաջորդականությամբ փորձերը
կրկնվել են նաև հաջորդ օրը, բայց առանց ռադիոֆոսֆորի ներարկման:

Կոնտրոլ փորձերից հետո կենդանին 7 օր եղել է հանգիստ վիճակում,
որից հետո ուսումնասիրել ենք ցավային և պայապանական ցավային
գրգռի ազդեցությունը, այս դեպքում երկրորդ 10 րոպեից անմիջապես հե-
տո ցավը տրվել է պայապանական գրգռիչի (էլեկտրական զանգի) զուգորդ-
մամբ: Հետևի ծայրանդամին ցավը պատճառվել է զանգը հնչեցնելուց 4—5
վայրկյան հետո, 30 վայրկյան տևողությամբ, 12 փոխ լարում ունեցող
փոփոխական հոսանքի ազդեցությամբ: Նույն փորձը յուրաքանչյուր շան
վրա գրվել է 2 օր, գրանից հետո 5 օրվա ընթացքում 5 անգամ պայապ-
անական գրգռող զուգորդվել է ցավի հետ (մեկուսացված սենյակում), առանց
մեղի հետադոտման և ռադիոֆոսֆորի ներարկման: Այնուհետև ստուգվել է
պայապանական գրգռի ազդեցությունը:

Երկրորդ վարիանտի փորձերի դեպքում, 3 շան վրա, ցավային և պայ-
ապանական ցավային գրգռի պայապաններում հետադոտել ենք արյան մեջ
ֆոսֆատների տարրեր ֆրակցիաները՝ ընդհանուր ֆոսֆորը, թթվալույծ և
ոչ թթվալույծ ֆոսֆատները, բարիում լուծվող և բարիում չլուծվող ֆոս-
ֆատների ֆրակցիաները՝ ըստ Վ. Վ. Ումրեյտ, Ռ. Ս. Բուրբուս և Դժ. Ֆ.
Շտաուֆֆերի [9]:

Սահմանվել է մեթոդական հետևյալ կարգը: Ռադիոֆոսֆորը ներար-
կելուց 24 ժամ հետո, կոնտրոլ փորձերի ժամանակ լծակին երակից վերցրե-
վել է արյան առաջին նմուշը, դրանից 5 րոպե հետո՝ 2-րդ նմուշը, իսկ 20
րոպե հետո՝ 3-րդ նմուշը: Ծիշա նույն կարգով արյան նմուշներ են վեր-
ցրվել ռադիոֆոսֆորը ներարկելուց 48 ժամից հետո: 7 օր հանգստից հե-
տո նույն շան վրա փորձերը կրկնվել են ցավի ազդեցության պայապաննե-
րում, ցավը պատճառվել է արգեն վերը նկարագրված ձևով, արյան առա-
ջին նմուշը վերցնելուց անմիջապես հետո: Վերջապես փորձեր են գրվել
պայապանական գրգռի ազդեցությունը պարզաբանելու համար, հետադոտ-
ման կարգը եղել է նույնը: Փորձերի արդյունքները տալիս ենք աղյուսակ-
ների ձևով:

Ինչպես նշվել է փորձերի մեթոդիկայում, մեզը հավաքվել է կաթնա-
ջուրը տալուց կես ժամ հետո, ժամանակի հետևյալ ինտերվալներում 10
րոպե՝ առաջին մեղը, 10 րոպե՝ 2-րդ, 5 րոպե՝ 3-րդ, 15 րոպե՝ 4-րդ և 20

Ծավալին ու պայմանական ցավային զրգոի ազդեցությունը մեղի և ֆոսֆորի առտադասման վրա
(ոադիոֆոսֆորի ալտիվությունը հաշված է իմպ/րոպ-ով)
շ ու ն թ ա ս ա ր

Մեղի հավաքելու ժամանակահատվածը րոպեներով	Կ ո ն տ ր ո լ կշիռ 26 կգ ներառել. 6/VII 98 μ C				Ծ ա վ կշիռ 28 կգ ներառել. 9/VIII 201 μ C				Պայմանական սեֆլեքս կշիռ 30 կգ ներառել. 17/VIII 107,2 μ C			
	դ ա տ ա	Մեղի քանակը (1բ) (1բ)	0,1 մլ մեղուժ	մեկ րոպեում առադատված ոադիոֆոսֆորը	դ ա տ ա	Մեղի քանակը (1բ) (1բ)	0,1 մլ մեղուժ	մեկ րոպեում առադատված ոադիոֆոսֆորը	դ ա տ ա	Մեղի քանակը (1բ) (1բ)	0,1 մլ մեղուժ	մեկ րոպեում առադատված ոադիոֆոսֆորը
I-10	6/VII	28	2232	62496	9/VIII	42	2480	105160	17/VIII	24	1266	30384
II-10		40	1084	43360		40	2386	95440		24	1242	29803
III-5		18	1058	38088		4	1405	11240		4	1192	9536
IV-15		30	1006	20120		8	2277	16144		28	1446	26992
V-20		35	809	15667		32	1021	16336		23	920	10580
		151				126				103		
I-10	7/VII	27	132	5564	10/VIII	20	142	2840	18/VIII	50	57	2850
II-10		34	116	3944		23	117	2693		52	48	2496
III- 5		20	112	4460		3	92	372		4	26	203
IV-15		51	110	3740		19	122	1545		36	46	920
V-20		40	102	2040		28	82	1148		40	36	720
		172				92				176		

րոպե՝ 5-րդ մեզրի Ցավը տրված է 2-րդ մեզրի վերցնելուց անմիջապես հետո Բասար փորձնական շան մոտ (ազ. 1) փորձի արդյունքներն են՝ կոնտրոլ փորձերում մեզի քանակը եղել է 28, 40, 18, 30 և 35 մլ, Խաղիոֆոսֆորի ակտիվությունը 0,1 մլ մեզում եղել է 1-ին նմուշում՝ 2232, 2-րդում՝ 1084, 3-րդում՝ 1058, 4-րդում՝ 1006 և 5-րդում՝ 809 իմպ/րոպ, ռադիոֆոսֆորի ակտիվությունը 1 րոպեում արտադատված մեզում եղել է՝ 1-ին նմուշում՝ 62496, 2-րդում՝ 43360, 3-րդում՝ 38088, 4-րդում՝ 20120 և 5-րդում՝ 15667 իմպ/րոպ:

Ցավի ազդեցության տակ մեզի քանակը եղել է՝ 42, 40, 4, 8 և 32 մլ, 0,1 մլ մեզում ռադիոֆոսֆորի ակտիվությունը եղել է՝ 2480, 2386, 1405, 2277 և 1021 իմպ/րոպ:

Խաղիոֆոսֆորի ակտիվությունը մեկ րոպեում արտադատված մեզում՝ 105160, 95440, 11240, 10144 և 16336 իմպ/րոպ:

Պայմանական ցավային գրգռի ազդեցության պայմաններում մեզի քանակը եղել է՝ 24, 24, 4, 28, 23 մլ, ռադիոֆոսֆորի ակտիվությունը 0,1 մլ մեզում՝ 1266, 1242, 1192, 1446 և 920 իմպ/րոպ: Խաղիոֆոսֆորի ակտիվությունը մեկ րոպեում արտադատված մեզում՝ 30384, 29808, 9536, 26992 և 10580 իմպ/րոպ:

Փորձի տվյալները ցույց են տալիս, որ ցավային և պայմանական ցավային գրգռի ազդեցության տակ արտադատվող մեզի քանակը նվազում է: Եթե կոնտրոլ փորձերում 5 րոպեում ֆիլտրվել է 18 մլ մեզ, ապա ցավի պայմաններում ֆիլտրվել է 4 մլ, այսինքն 3,5 անգամ պակաս: Նույն արդյունքն ստացվում է նաև պայմանական գրգռի ազդեցության դեպքում: Միաժամանակ պետք է նշել, որ ցավի պայմաններում մեզի նվազումը ավելի տևական է, քան պայմանական գրգռի ազդեցության դեպքում: Մեզի մեջ նվազում է ռադիոֆոսֆորի կոնցենտրացիան և միայն ցավից որոշ ժամանակ հետո (15—20 րոպե) այն նորից բարձրանում է: Այսպես, օրինակ՝ եթե կոնտրոլ փորձերում երկրորդ 10 րոպեում հավաքված մեզի 0,1 մլ-ում ռադիոֆոսֆորի ակտիվությունը եղել է 1084 իմպ/րոպ, հաջորդ 5 րոպեում հավաքված մեզի 0,1 մլ-ում՝ 1058, իսկ հետևյալ 15 րոպեում 1006 իմպ/րոպ, ապա ցավի ազդեցության պայմաններում ռադիոֆոսֆորի ակտիվությունը համապատասխանաբար եղել է՝ 2386, 1405, 2277 իմպ/րոպ: Պայմանական ցավային գրգռի ազդեցության պայմաններում նույն պատկերն է, ինչ որ ցավի դեպքում՝ 1242, 1192 և 1446 իմպ/րոպ: Խաղիոֆոսֆորի կոնցենտրացիայի փոփոխությունը ավելի զգալի է, երբ համեմատում ենք ժամանակի նշված ինտերվալների մեկ րոպեում արտադատված ռադիոֆոսֆորի ակտիվությունները:

Խաղիոֆոսֆորի կոնցենտրացիայի փոփոխությունը մեզում ցավային և պայմանական ցավային գրգռի ազդեցության պայմաններում ավելի բացահայտ կերպով է արտահայտվում փորձի երկրորդ օրը, ռադիոֆոսֆորի ներարկումից 24 ժամ հետո: Օրինակ՝ նույն Բասար փորձնական շան մոտ կոնտրոլ փորձերում մեզի քանակը եղել է 27, 34, 20, 51 և 40 մլ: Խաղիոֆոսֆորի ակտիվությունը 0,1 մլ-ում եղել է՝ 1-ին նմուշում՝ 132, 2-րդում՝ 116, 3-րդում՝ 112, 4-րդում՝ 110 և 5-րդում՝ 102 իմպ/րոպ: Խաղիոֆոսֆորի ակտիվությունը մեկ րոպեում արտադատված մեզում եղել է

է՝ 1-ին նմուշում՝ 5564, 2-րդում 3944, 3-րդում՝ 4480, 3-րդում՝ 3740 և 5-րդում՝ 2040 խմայ/րոպ:

Յավի ազդեցության տակ մեզի քանակը եղել է 20, 23, 3, 19 և 28 մլ, 0,1 մլ մեզում ռադիոֆոսֆորի ակտիվությունը՝ 142, 117, 92, 122 և 82 խմայ/րոպ, ռադիոֆոսֆորի ակտիվությունը՝ մեկ րոպեում արտադատված մեզում եղել է 2840, 2693, 372, 1545 և 1148 խմայ/րոպ:

Պայմանական ջավային գրգռի ազդեցության պայմաններում մեզի քանակը եղել է 50, 52, 4, 30 և 40 մլ, 0,1 մլ մեզում ռադիոֆոսֆորի ակտիվությունը՝ 57, 48, 26, 46 և 36 խմայ/րոպ, իսկ ռադիոֆոսֆորի ակտիվությունը մեկ րոպեում արտադատված մեզում՝ 2850, 2496, 208, 920 և 720 խմայ/րոպ:

Վերահիշյալ օրինաչափ փոփոխությունները մենք ստացել ենք նաև փորձնական Ջանգի և Բելիտ շների մոտ: Յավի ազդեցության տակ դիտարկելի նվազման հետ միասին խիստ իջնում է արտադատվող ռադիոֆոսֆորի ակտիվությունը: Ստացված տվյալները համընկնում են Հ. Խ. Բունյաթյանի և նրա աշխատակիցների [5] տվյալների հետ: Յավային և պայմանական ջավային գրգռի ազդեցության պայմաններում մեզի նվազումը և նրա քիմիական բաղադրության փոփոխությունը, կապված ֆոսֆորի քանակության նվազման հետ, պետք է դիտել որպես ռեֆլեկտոր պրոցես և որի իրականացման մեջ առաջատար դեր ունի գլխուղեղի կեղեր: Յավային գրգռի ազդեցության ժամանակ մեզի նվազումը բացատրվում է ֆիլտրացիայի անկմամբ և ռեաբսորբցիոն պրոցեսների բարձրացմամբ: Հայտնի է, որ ջավի ազդեցության ներքո ուժեղանում է հիպոֆիզի անտիդիուրետիկ հորմոնի արտադատությունը, որը բարձրացնում է ջրի ռեաբսորբցիան երիկամային խողովակներում: Ինչ վերաբերում է ջավի պատճառով մեզի մեջ ֆոսֆորի կոնցենտրացիայի իջեցմանը, դա պետք է բացատրել օրգանիզմում նրա պահանջի մեծացմամբ, քանի որ ջավը առաջացնում է պաշտպանողական ռեակցիա, որը ուղեկցում է էներգետիկ մեծ ծախսումներով, և բարձրանում է ֆոսֆորային միացությունների պահանջը օրգանիզմում: Հավանորեն սրանով է բացատրվում ջավի հետևանքով ֆոսֆորի ռեաբսորբցիայի բարձրացումը: Յավից որոշ ժամանակ հետո (15—20 րոպե) մեզի մեջ ռադիոֆոսֆորի կոնցենտրացիայի բարձրացումը խոսում է այն մասին, որ օրգանիզմում օրգանական ֆոսֆատների քայքայման հետևանքով առաջացած անօրգանական ֆոսֆորը դուրս է գալիս մեզի միջոցով:

Ֆոսֆատների տարրեր ֆրակցիաների փոփոխությունը
արյան մեջ ջավային և պայմանական ջավային գրգռի
ազդեցության պայմաններում

Յավի ազդեցությունը ֆոսֆատների տարրեր ֆրակցիաների փոփոխության վրա պարզելու համար, մենք ուսումնասիրել ենք նաև արյան ֆոսֆատների տարրեր ֆրակցիաների ռադիոակտիվությունները: Փորձերը իրականացվել են 3 շան վրա: Չափիկ շան վրա ստացված տվյալները դարձյալ բերում ենք ադյուստակի ձևով (աղ. 2):

Ֆոսֆատների տարբեր ֆրակցիաների փոփոխությունը արյան մեջ, ճափային և պայմանական ջափային զրդոի ադգեզություն պայմաններում
(ռադիոֆոսֆորի ալտիվությունը հաշված է 0,2 մլ արյան մեջ իմպ/րոպ-ով)

2 ուն 2 ա ի կ

Արյունը վերցված է	Կ ո ն տ ր ո լ Կշիռը 26 կգ ներարկ. 21/II 105,3 μC						Ս ա վ Կշիռը 25 կգ ներարկ. 7/III 105,5 μC						Պայմանական ռեֆերա Կշիռը 26 կգ ներարկ. 5/IV 104,2 μC					
	դ ա տ ա	ընդհ. ֆոսֆոր	բնական ֆրակցիան	նշ բնական ֆրակցիան	Ba-ում լուծվող ֆրակցիան	Ba-ում լուծ- վող ֆրակցիան	դ ա տ ա	ընդհ. ֆոսֆոր	բնական ֆրակցիան	նշ բնական ֆրակցիան	Ba-ում լուծվող ֆրակցիան	Ba-ում լուծ- վող ֆրակցիան	դ ա տ ա	ընդհ. ֆոսֆոր	բնական ֆրակցիան	նշ բնական ֆրակցիան	Ba-ում լուծ- վող ֆրակցիան	Ba-ում լուծ- վող ֆրակցիան
I—նախն.	22/II	1070	620	450	60	560	8/III	1250	670	580	175	495	6/IV	1325	755	570	235	520
II—5 րոպ.		1050	605	445	50	555	9	1260	710	548	190	520		1310	840	500	295	545
III—20 րոպ.		1060	605	455	55	550		1240	785	455	225	560		1320	875	445	325	550
I—նախն.	23/II	920	550	370	165	385	9/III	1050	610	440	254	356	7/IV	1175	705	470	240	465
II—3 րոպ.		900	525	375	150	375	9	1045	680	365	310	370		1180	800	350	295	505
III—20 րոպ.		910	535	375	150	385		1060	760	300	380	330		1170	820	345	330	495

Ֆրակցիաների % - ա յ ի ն ո ա դ ի ո ա կ տ ի վ ու թ յ ու ն ը

I—նախն.	22/II	100	57,9	42,1	5,6	52,3	8/III	100	53,6	46,4	14,0	39,6	6/IV	100	57,0	43,0	17,8	39,2
II—5 րոպ.		100	57,6	42,4	4,8	52,8		100	56,3	43,7	15,9	41,3		100	62,7	37,3	22,0	40,7
III—20 րոպ.		100	57,1	42,9	5,2	51,9		100	63,3	36,7	18,1	45,2		100	66,3	33,7	25,6	41,7
I—նախն.	23/II	100	59,8	40,2	18,0	41,9	9/III	100	58,1	41,9	24,2	33,9	7/IV	100	60,0	40,0	20,4	39,6
II—5 րոպ.		100	58,3	41,7	16,6	41,7		100	65,7	34,3	30,7	35,4		100	67,8	32,2	25,0	42,8
III—20 րոպ.		100	58,3	41,2	16,5	42,3		100	71,7	28,3	36,3	35,8		100	70,5	29,5	28,2	42,3

Զավիկ փորձնական շան մոտ (ադ. 2), ինչպես ցույց են տալիս կոնտրոլ փորձերի տվյալները, ընդհանուր ֆոսֆորի քանակությունը արյան մեջ համարյա մնում է անփոփոխ, թթվում լուծվող ֆրակցիաների քանակությունը (բարիում լուծվող և բարիում չլուծվող ֆոսֆատները) համարյա թե բոլոր դեպքերում գերակշռում է ոչ թթվալույծ (ֆոսֆոպրոտեիններ և ֆոսֆատիդներ) ֆրակցիայի քանակությամբ: Հետաքրքրական է նաև այն, որ այդպիսի օրինաչափ փոփոխություն նկատվում է բարիում չլուծվող (ադենոզինտրիֆոսֆատ, ադենոզինդիֆոսֆատ, ֆրուկտոզդիֆոսֆատ, 3-ֆոսֆոգլիցերինաթթու, անօրգանական ֆոսֆատներ) և բարիում լուծվող գլուկոզ-1-ֆոսֆատ, գլուկոզ-6-ֆոսֆատ, ֆրուկտոզ-6-ֆոսֆատ, ֆոսֆոպիրոսպոդաթթու, տրիդ-ֆոսֆատներ, ադենիլաթթու, ֆոսֆոկրեատին) ֆրակցիաների նկատմամբ, բայց ի տարբերություն թթվալույծ և ոչ թթվալույծ ֆրակցիաների, այստեղ բարիում չլուծվող ֆրակցիան ավելի շատ է, քան բարիում լուծվող ֆրակցիան: Օրինակ՝ Զավիկ փորձնական շան մոտ (ադ. 2) ռադիոֆոսֆորը ներարկելուց 24 ժամ հետո կոնտրոլ փորձերում առաջին օրը ընդհանուր ֆոսֆորի ակտիվությունը արյան առաջին նմուշում կազմում է 1070, 2-րդում՝ 1050 և 3-րդում՝ 1060 իմպ/րոպ, թթվալույծ ֆրակցիայի ակտիվությունը համապատասխան նմուշներում՝ 620, 605 և 605 իմպ/րոպ, ոչ թթվալույծ ֆրակցիայինը՝ 450, 445 և 555 իմպ/րոպ, բարիում լուծվող ֆրակցիայինը՝ 60, 50 և 55 իմպ/րոպ, իսկ բարիում չլուծվող ֆրակցիայինը՝ 560, 555 և 550 իմպ/րոպ: Կոնտրոլ փորձերում 2-րդ օրը (ռադիոֆոսֆորի ներարկումից 48 ժամ հետո) նույն փորձնական շան մոտ ընդհանուր ռադիոֆոսֆորի ակտիվությունը արյան մեջ համապատասխանաբար հավասար է՝ 920, 900 և 910 իմպ/րոպ, թթվալույծ ֆրակցիայինը՝ 550, 525 և 535 իմպ/րոպ, ոչ թթվալույծ ֆրակցիանը՝ 370, 375 և 375 իմպ/րոպ, բարիում լուծվող ֆրակցիայինը՝ 165, 150 և 150 իմպ/րոպ, իսկ բարիում չլուծվող ֆրակցիայինը՝ 385, 375 և 385 իմպ/րոպ:

Կոնտրոլ փորձերում ստացված տվյալները բերում են այն եզրակացության, որ ըստ ֆոսֆորի զգալի արագություն փոխանակվում են այն ֆոսֆատները, որոնք գտնվում են բարիում չլուծվող ֆրակցիայում և զրանցից առաջին ներթին պետք է մտածել ադենոզինտրի և դիֆոսֆատի մասին: Փոխանակման պրոցեսը համեմատաբար լավ է արտահայտված նաև ոչ թթվալույծ ֆրակցիայում՝ ֆոսֆոպրոտեիններում և ֆոսֆատիդներում: Բարիում լուծվող ֆրակցիան շատ ավելի փոքր արագությամբ է վերակառուցման ենթարկվում: Այդ հաստատվում է նաև 48 ժամից հետո դրված փորձերի տվյալներում, որտեղ ի հաշիվ ոչ թթվալույծ և հատկապես բարիում չլուծվող ֆրակցիաների ակտիվությունների նվազման բարձրացնում են բարիում լուծվող ֆրակցիայի ակտիվությունները: Օրինակ՝ եթե ընդհանուր ռադիոֆոսֆորի ակտիվությունն ընդունենք 100%, ապա ֆրակցիաների համեմատական ակտիվությունը կոնտրոլ փորձերի առաջին օրը կլինի՝ թթվալույծ ֆրակցիայում՝ 57,9, 57,6 և 57,1%, ոչ թթվալույծ ֆրակցիայում՝ 42,1 42,4 և 42,9%, բարիում լուծվող ֆրակցիայում՝ 5,6 4,8 և 5,2%, բարիում չլուծվող ֆրակցիայում՝ 52,3, 52,8 և 51,9%: Փորձերի երկրորդ օրը ռադիոֆոսֆորի ակտիվությունը թթվալույծ ֆրակցիայում կազմում է 59,8 58,3, 58,3%, ոչ թթվալույծ ֆրակցիայում՝ 40,2, 41,7 և 41,2%, բարիում լուծվող ֆրակցիայում՝ 18,0, 16,6 և 16,5%, բարիում

չլուծվող ֆրակցիայում՝ 41,9, 41,7 և 42,3⁰/₀։ Ցավի ժամանակ ֆոսֆորի ֆրակցիաների փոփոխություն պատկերը բավականին բնորոշ կերպով փոփոխվում է։ Ցավի ազդեցության տակ ընդհանուր ֆոսֆորի ակտիվությունը համարյա չի փոխվում, նույն փորձնական Չալիկ շան մոտ ցավի պայմաններում փորձի առաջին օրը ընդհանուր ռադիոֆոսֆորի ակտիվությունը արյան առաջին նմուշում, նախքան ցավը կազմում է 1250 իմպ/րոպ, ցավից անմիջապես հետո 2-րդ նմուշում՝ 1260 և 3-րդում՝ 1240 իմպ/րոպ, թթվալույծ ֆրակցիայում՝ 670, 710 և 785 իմպ/րոպ, ոչ թթվալույծ ֆրակցիայում՝ 580, 548 և 455 իմպ/րոպ, բարիում լուծվող ֆրակցիայում՝ 175, 190 և 225 իմպ/րոպ և բարիում չլուծվող ֆրակցիայում՝ 495, 520 և 560 իմպ/րոպ։ Հետաքրքրական է այն, որ ցավի պայմաններում թթվալույծ ֆոսֆատների ակտիվությունը բարձրանում է և բարձրացումը նկատվում է ինչպես բարիում լուծվող ֆրակցիայի, այնպես էլ բարիում չլուծվող ֆրակցիայի նկատմամբ։ Ինչ վերաբերում է ոչ թթվալույծ ֆրակցիային, ապա նրա ակտիվությունը նվազում է։ Նույն օրինակաչափությունը նկատվում է նաև փորձի երկրորդ օրը (ռադիոֆոսֆորի ներարկումից 48 ժամ հետո), այսպես, օրինակ, ընդհանուր ռադիոֆոսֆորի ակտիվությունը նախքան ցավը կազմել է 1050, իսկ ցավից հետո՝ 1045 և 1060 իմպ/րոպ, թթվալույծ ֆրակցիայում համապատասխան ձևով՝ 610, 680, և 760 իմպ/րոպ, ոչ թթվալույծ ֆրակցիայում՝ 440, 365 և 300 իմպ/րոպ, բարիում լուծվող ֆրակցիայում՝ 254, 310 և 380 իմպ/րոպ և բարիում չլուծվող ֆրակցիայում՝ 356, 370 և 380 իմպ/րոպ։ Այս դեպքում ավելի ակնհայտ է ոչ թթվալույծ ֆրակցիայի ակտիվության իջեցումը, իսկ թթվալույծ ֆրակցիայից՝ բարիում լուծվող ֆրակցիայի ակտիվության բարձրացումը։ Եթե նշված ֆրակցիաների ակտիվությունն արտահայտենք տոկոսներով, ընդունելով ընդհանուր ֆոսֆորի ակտիվությունը 100⁰/₀, կստանանք հետևյալ պատկերը՝ փորձի առաջին օրը ռադիոֆոսֆորի ակտիվությունը թթվալույծ ֆրակցիայում ցավից առաջ կազմում է 53,6 ցավից հետո՝ 56,3 և 63,3⁰/₀, բարիում լուծվող ֆրակցիայինը՝ 14,0, 15,9 և 18,1⁰/₀, բարիում չլուծվող ֆրակցիայինը՝ 39,6 41,3 և 45,2⁰/₀, ֆորձի երկրորդ օրը թթվալույծ ֆրակցիայի ակտիվությունը կազմում է 58,1, 65,7 և 71,7⁰/₀, ոչ թթվալույծ ֆրակցիայինը՝ 41,9, 34,3 և 28,3⁰/₀, բարիում լուծվող ֆրակցիայինը՝ 24,2, 30,3 և 36,2⁰/₀ և բարիում չլուծվող ֆրակցիայինը՝ 33,9, 35,4 և 35,8⁰/₀։ Պայմանական ցավային դրգոի ազդեցության տակ ստացվել են նույն օրինաչափ փոփոխությունները, օրինակ՝ նույն փորձնական Չալիկ շան մոտ (ադ. 2) պայմանական ռեֆլեքսի ժամանակ ունենք հետևյալ պատկերը։ Փորձի առաջին օրը ընդհանուր ռադիոֆոսֆորի ակտիվությունը արյան առաջին նմուշում կազմում է 1325, դանդից անմիջապես հետո 2-րդ նմուշում՝ 1340 և 3-րդ նմուշում՝ 1320 իմպ/րոպ, թթվալույծ ֆրակցիայում՝ համապատասխանաբար 755, 840 և 875 իմպ/րոպ, տոկոսներով արտահայտված՝ 57,0, 62,7 և 66,3⁰/₀, թթվում չլուծվող ֆրակցիայի նկատմամբ՝ 570, 500 և 445 իմպ/րոպ, որը կազմում է 43,0, 37,3 և 33,7⁰/₀, բարիում լուծվող ֆրակցիայում՝ 235, 295 և 325 իմպ/րոպ, տոկոսային հարաբերությամբ՝ 17,8, 22,0 և 25,6⁰/₀, բարիում չլուծվող ֆրակցիայում 520, 545 և 550 իմպ/րոպ կամ 39,2, 40,7 և 41,7⁰/₀։

Փորձի երկրորդ օրը ընդհանուր ֆոսֆորի ակտիվությունը եղել է 1175, 1180 և 1170 խմայ/րոպ, թթվալույծ ֆրակցիայում՝ 705, 800 և 820 խմայ/րոպ, կամ 60,0, 67,8 և 70,5⁰/₀, ոչ թթվալույծ ֆրակցիայում՝ 470, 380 և 345 խմայ/րոպ, կամ 40,0, 32,2 և 29,5⁰/₀, բարիում լուծվող ֆրակցիայում՝ 240, 295 և 330 խմայ/րոպ, կամ 20,4, 25,0 և 28,2⁰/₀ և բարիում չլուծվող ֆրակցիայում՝ 465, 505 և 495 խմայ/րոպ, իսկ տոկոսներով արտահայտված՝ 39,6, 42,8 և 42,3⁰/₀, վերոհիշյալ օրինաչափ փոփոխությունները նկատում ենք նաև մյուս փորձնական «Բելկա» և «Բորիկ» շրջների մոտ:

Ստացված տվյալները խոսում են այն մասին, որ ցավի ազդեցության ներքո արյան մեջ արագանում է ֆոսֆոպրոտեյինների կամ ֆոսֆատիզների քայքայումը կամ նրանց քանակը զգալիորեն նվազում է արյան մեջ: Մինչդեռ բարիում չլուծվող և հատկապես բարիում լուծող ֆրակցիաների ակտիվության բարձրացումը վկայում է այդ ֆրակցիաների մեջ մտնող կարևոր մակրոերգիկ ֆոսֆատների՝ ադինոդինորիֆոսֆատի, դիֆոսֆատի, կրեատին ֆոսֆատի արագ փոխանակման մասին, համաձայն գրականության մի շարք տվյալների: Այս նյութերի ակտիվության բարձրացմամբ կարելի է մասամբ բացատրել այն, որ ցավի պայմաններում մեղի միջոցով անջատվում է տվյալ մամանակամիջոցների ընթացքում տվելի քիչ քանակությամբ ռադիոֆոսֆոր: Ինչ վերաբերում է բարիում չլուծվող ֆրակցիայի մեջ մտնող ֆրոկտոզոդիֆոսֆատին և 3-ֆոսֆոգլիցերինաթթվին, ապա նրանց քանակությունը արյան մեջ փոքր է և դժվար թե առանձին նշանակություն ունենա: Նույնը կարելի է ասել և բարիում լուծվող ֆրակցիաների մեջ մտնող գլուկոզ-6-ֆոսֆատի, գլուկոզ-1-ֆոսֆատի, ֆոսֆոպիրոլիսալոդաթթվի և տրիոզ-ֆոսֆատների վերաբերյալ: Ավելի հետաքրքրություն են ներկայացնում այս ֆրակցիայում ֆոսֆոհրեատինը և ադելինաթթուն, ինչ վերաբերում է բարիում չլուծվող ֆրակցիայի մեջ մտնող անօրգանական ֆոսֆատին, ապա նրա քանակությունը մեր կողմից առանձին որոշված չէ: Այդ տեսակետից հետաքրքրական է հետազայում պարզել, թե վերոհիշյալ ֆրակցիաների մեջ մտնող որ ֆոսֆատների ակտիվությունն է առանձնապես փոփոխության ենթարկվում ցավի ազդեցության տակ:

Ինչպես տեսնում ենք, արյան ֆոսֆատների տարրեր ֆրակցիաների փոփոխությունները նույն օրինաչափությամբ տեղի են ունենում նաև պայմանական ցավային դրդոյի ազդեցության դեպքում. սա վկայում է այն մասին, որ ֆոսֆորի փոխանակության մեջ կարևոր նշանակություն է ստանում ռեֆլեկտոր մեխանիզմը, որը իրականացվում է գլխուղեղի կեղևի անմիջական մասնակցությամբ և դա հասկանալի է, քանի որ ֆոսֆատները նյութափոխանակության մեջ ունեն բացառիկ նշանակություն, հատկապես այն դեպքում, երբ օրգանիզմը տագնապային վիճակ է ապրում, ինչպես այդ տեղի է ունենում օրգանիզմում ցավի առկայության դեպքում:

Ստացված տվյալները թույլ են տալիս անելու հետևյալ եզրակացությունները.

1. Ծավի ազդեցության տակ դիտվողի նվազման հետ միասին խիստ իջնում է ներարկված ռադիոֆոսֆորի արտադատումը:

2. Ռադիոֆոսֆորի ներարկումից 24 ժամ հետո արյան մեջ ամենից շատ նա հանդես է գալիս թթվալույծ ֆրակցիայում, իսկ այդ ֆրակցիայից, հատկապես բարիում չլուծվող ֆրակցիայում և շատ ավելի քիչ՝ բարիում լուծվող ֆրակցիայում:

3. Ռադիոֆոսֆորի ներարկումից 48 ժամ հետո արյան ընդհանուր ֆոսֆորի ակտիվությունը, 24 ժամվա համեմատությամբ, նրա հետ ներարկման ժամանակաշրջանում նվազում է, բայց տոկոսային հարաբերությամբ նկատվում է ոչ թթվալույծ ֆրակցիայի ակտիվության զգալի իջեցում. թթվալույծ ֆրակցիայի ակտիվությունը որոշ չափով բարձրանում է. թթվալույծ ֆոսֆատներից՝ հատկապես բարձրանում է բարիում լուծվող ֆրակցիայի ակտիվությունը, այնինչ բարիում չլուծվող ֆրակցիայի ակտիվությունը նվազում է:

4. Ցավային և պայմանական ցավային դրգոի ազդեցության տակ ռադիոֆոսֆորի ներարկելուց 24 և 48 ժամ հետո արյան մեջ ընդհանուր ֆոսֆորի ակտիվությունն ասանձնապես փոփոխության չի ենթարկվում: Զգալիորեն բարձրանում է թթվալույծ ֆրակցիայի ակտիվությունը, այդ ֆրակցիայից հատկապես բարձրանում է բարիում լուծվող ֆրակցիայի ակտիվությունը, ավելանում է նաև բարիում չլուծվող ֆրակցիայի ակտիվությունը: Զգալիորեն իջնում է ոչ թթվալույծ ֆրակցիայի ակտիվությունը:

Երևանի բժշկական ինստիտուտի բիոքիմիական
ամբիոն և Երևանի անասնաբուժական ինստիտուտի
ֆիզիկայի ամբիոն

Ստացվել է 6 IV 1957

3. С. ЧЕРКЕЗЯН

ДЕЙСТВИЕ БОЛЕВОГО И УСЛОВНОБОЛЕВОГО РАЗДРАЖЕНИЯ НА ФОСФАТЫ КРОВИ И ВЫДЕЛЕНИЕ ФОСФОРА

Р е з ю м е

Учитывая важное значение фосфорных соединений в обменных процессах, интересно было изучить, как ведут себя отдельные фракции фосфатов крови и как изменяется количество неорганического фосфора в моче под действием боли.

Опыты были поставлены на шести собаках, из которых у трех подопытных собак были выведены мочеточники (по методу И. П. Павлова и Л. А. Орбели). Опыты проводились в двух вариантах. В первом варианте опытов перед нами была поставлена задача, выяснить действие болевого и условноболевого раздражения на выделение радиоактивного фосфора с мочой. Во втором варианте опытов на трех собаках в условиях действия болевого и условноболевого раздражения, изучалось изменение отдельных фракций фосфатов в крови: общий фосфор, кислот-

но-растворимые и нерастворимые фосфаты. барий—растворимые и нерастворимые фосфаты.

Полученные результаты позволяют сделать следующие выводы:

1. Под действием боли наряду с уменьшением диуреза namного понижается выделение введенного радиофосфора.

2. После введения радиофосфора, спустя 24 часа, он больше всего накапливается в кислотно-растворимой фракции, а из этой фракции в барий нерастворимых фосфатах. Активность бария растворимой фракции незначительна.

3. Спустя 48 часов после введения радиофосфора, активность общего фосфора крови снижается, по сравнению с 24-часовым периодом после ее введения, но в процентном отношении отмечается заметное снижение активности кислотно-нерастворимой фракции. Активность кислотно-растворимой фракции несколько повышается. Из кислотно-растворимых фосфатов особенно повышается активность бария растворимой фракции. Между тем, как активность бария нерастворимой фракции понижается.

4. Под действием боли условноболевого раздражения, после введения радиофосфора, спустя 24 и 48 часов, в крови активность общего фосфора особым изменениям не подвергается, но заметно повышается активность кислотно-растворимой фракции, а в этой фракции особенно повышается активность в барии растворимых фосфатов. Менее значительна также активность в барии нерастворимой фракции; значительно понижается активность кислотно-нерастворимой фракции.

Փ Ր Ա Վ Ա Ն Ո Ր Թ Յ Ո Ր Ն

1. Орбели Л. А. Вопросы нейрохирургии. 2, 4, 1938.
2. Асратян Э. А. Известия института им. П. Ф. Лесгафта, 17—18, 221, 242, 1934.
3. Бунятян Г. Х. Доклады VII Всесоюзного съезда физиологов, биохимиков и фармакологов. Ст. 212, 1947, тезисы докладов I Закавказского съезда физиологов, биохимиков и фармакологов, ст. 40, 1948.
4. Бунятян Г. Х., Кечек Ю. А. и Матинян Г. В. Научные труды института физиологии АН АрмССР, 2, 5, 1949.
5. Адуниц Г. Г., Егян В. Б. и Оганесян А. С. Вопросы высшей нервной деятельности, вып. 1, 71, 1952. Изд. АН АрмССР.
6. Гродзенский Д. и Ильина Л. Физиологический журнал СССР, 29, вып. 4, 341, 1940.
7. Бернштейн А. Л. Вопросы мед. химии. 3, 66, 1951.
8. Черкезян З. С. Известия Академии наук Армянской ССР (биол. и сельхоз. науки, IX, 12, 1956).
9. Умбрейт З. В., Буррус Р. Х. и Штауффер Дж. Ф. Монометрические методы изучения тканевого обмена. 1951, Москва и-л ст. 288.

Հ. Վ. ՄԱՏԻՆՅԱՆ

ՔԼՈՐՈՊՐԵՆԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿԱՄՆԵՐԻ ՖԻԼՏՐԱՑԻՈՆ ԵՎ
ՌԵԱԲՍՈՐԲՑԻՈՆ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԻ ՎՐԱ

Գրականություն մեջ կարելի է հանդիպել մի շարք աշխատանքների, որոնք նվիրված են քլորոպրենի և նրա մի շարք ածանցյալների ազդեցությանը օրգանիզմի այս կամ այն օրգանի կամ նյութափոխանակության որևէ օղակի վրա: Այդ աշխատանքների մեջ բավականին մեծ տեղ են գրավում այնպիսիները, որոնք նվիրված են քլորոպրենի մահացու (կամ մեծ) դոզաներից կենդանիների օրգանիզմում կատարված պաթ-անատոմիական փոփոխություններին: Քլորոպրենի փոքր (արդյունաբերական պայմաններին նմանօր) դոզաների երկարատև ազդեցությունը զանազան օրգանների ֆունկցիաների վրա ավելի քիչ է ուսումնասիրված, չնայած որ դիտական և գործնական ավելի մեծ արժեք է ներկայացնում:

Երբ մենք ծանոթացանք Ա. Մ. Տրոփկայա — Անդրեևայի [1] աշխատությանը, որի համաձայն քլորոպրենային սուր թունավորման ժամանակ երիկամներում հանդես են գալիս խորը պաթ-անատոմիական փոփոխություններ թե՛ մալպիգյան կծիկներում և թե՛ խողովակների մեջ, մեզ հետաքրքրեց այն հարցը, թե ինչպես կփոխվի երիկամների ֆիլտրացիոն և ռեաբսորբիցիոն ֆունկցիան քլորոպրենային քրոնիկ թունավորման ժամանակ: Մյուս կողմից մեզ հայտնի էր նաև Գ. Վ. Գերշունու, Ա. Վ. Ջոնովայի և Մ. Պ. Լյուբիմովայի աշխատությունը [2], ըստ որի շների քրոնիկ և երկարատև թունավորումը դիմերներով, երիկամներում ոչ մի փոփոխություն չի առաջացրել: Փոփոխություններ չեն առաջացել նաև լյարդում և մակերիկամներում, մինչդեռ թոքերում, լիմֆատիկ գեղձերում, ոսկրածուծում և փայծաղում նկատվել են խորը պաթ-անատոմիական փոփոխություններ: Նկատի ունենալով Ջակուսովի, Լադարևի, Ստարոդուբսկայայի և այլոց աշխատանքները [3, 4, 5], որոնց համաձայն աղետիլենից կաուչուկի ստացման բոլոր միջանկյալ պրոդուկտների թունավոր հատկությունները որակապես նման են և տարբերվում են միայն քանակապես, կարելի է Գերշունու, Ջակուսովի և Լյուբիմովայի [2] ստացած տվյալները որոշ չափով վերադրել նաև քլորոպրենին: Այս դեպքում երիկամների այդ աատիճան կայունությունը չի համընկնում Տրոփկայա — Անդրեևայի [1] տվյալներին, որոնց համաձայն երիկամն առաջին հերթին է տուժում:

Գրականության մեջ քլորոպրենային թունավորման դեպքում երիկամների ֆունկցիայի փոփոխությունների վերաբերյալ որևէ աշխատանք չենք հանդիպել, այդ պատճառով էլ որոշեցինք դրադիել այդ հարցով:

Երիկամների ֆիլտրացիոն և ռեաբսորբիցիոն ֆունկցիաներն ուսումնասիրելու համար մենք ընտրեցինք հետևյալ ցուցանիշները. ֆիլտրացիան և ջրի, քլորի ու ֆոսֆորի ռեաբսորբիցիայի տեղումը: Ֆիլտրացիան որոշվեց

Ա. Գիլմանի և աշխատակիցների առաջարկած հիպոսուլֆիտային մեթոդով [6]:

Այն հանդամանքը, որ հիպոսուլֆիտի ազդեցությամբ փոխվում է ջրի սեաքսորրեցիան, մեր փորձերում առանձին նշանակություն չունի, քանի որ մենք համեմատում էինք թունավորումից առաջ և հետո ստացված տվյալները:

Ծանոթանալով և փորձարկելով թունավորման դանազան մեթոդները, մենք ընտրեցինք գիմակային մեթոդը, սակայն գիմակի կառուցվածքի և քլորոսպրենի գոլորշիացման հարմարանքների մեջ մտքերինք մի շարք փոփոխություններ: Թունավորման կամերային մեթոդի գեպքում արտաշնչված օդը խառնվում է ներշնչվող օդի հետ, փոխվում է թթվածնի, ածխաթթու, գազի, ջրային գոլորշիների և օդի այլ բաղադրիչ մասերի կոնցենտրացիան և հենց թունավոր նյութի քանակն ու որակը, մինչդեռ գիմակային մեթոդը զերծ է վերահիշյալ թերություններից:

Դիմակները պատրաստվել են գնչակալների ձևով, որպեսզի շների աչքերը մնան ազատ և ավելորդ անհանգստություն չստանան: Դիմակի ստորին մասում ամրացվել է երկու լայն խողովակ, ներշնչման և արտաշնչման նուրբ փականներով: Ներշնչման խողովակին ամրացվել է հատուկ հարմարանք, որտեղ լցվում է քլորոսպրենը և կարգավորվում նրա գոլորշիացումը: Դիմակի հերմետիկությունը շան գնչի վրա ապահովվում է բարակ սեալիկ օղակով, որը մի ծայրով ամրացված է գիմակի վերին մասին, իսկ մյուս ծայրով հավում է շան գնչի վրա: Այդպիսի գիմակով շների շնչառությունը կատարվում էր այն աստիճան լավ, որ նրանք ժամերով նստում էին առանց շարժվելու և անհանգստանալու, նույնիսկ քլորոսպրենով թունավորելու ժամանակ:

Որոշելով շների նորմալ շնչառություն ծախսը մեկ ժամում, գիմակի մեջ գոլորշիացվել է այնքան քլորոսպրեն, որ ստացվի ցանկացած դոզան:

ՓՈՐՁԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Փորձերն սկսվել են 10/XI—55 թ. № 1 շան վրա, իսկ 10/XI—56 թ. սկսվել են նաև № 2 շան վրա և տարվել են դուզահետ կարգով:

Շուն № 1, Սևակ անունով, 18,75 կգ քաշով, էգ, 15 օր առաջ միզածորաններն անջատած ըստ Պավլովի: Նորմալ շնչառությունը 1 ժամում 446 լիտր: Նախքան թունավորումն սկսելը, գրվել են 8 կոնտրոլ փորձեր, որոնց ընթացքում գիտվել է երիկամների նորմալ ֆունկցիան:

Ինչպես հայտնի է, նորմալ երիկամը կարգավորում է արյան օսմոտիկ ճնշումը, հեռացնելով ավելցուկ աղերը: Օրգանիզմում աղերի պակասության գեպքում երիկամը հեռացնում է աղերի փոքր քանակներ, կամ բոլորովին չի հեռացնում: Շների վրա այդ երևույթը շատ ցայտուն կերպով երևում է հատկապես ֆոսֆորի աղերի վերաբերյալ: Ֆոսֆատների պակասության ժամանակ երիկամներում նրա սեաքսորրեցիայի տեղոսը հասնում է 100-ի: Դա առողջ երիկամի հատկանիշն է, որը կարող է տեղի չունենալ նրա ֆունկցիայի խանգարման գեպքում: Քլորոսպրենային թունավորման գեպքում երիկամների ֆունկցիայի սպասվելիք խանգարումն ստուգվել է նաև վերը նշված հատկանիշով: Սնունդն ազդատաքվել կամ հարստացվել է ֆոսֆատներով, քլորիդներով կամ ջրով և ստուգվել է ավյալ բաղադրիչի սեաքսորրեցիայի տեղոսը:

Ֆոսֆատներով հարստացնելու համար սննդի մեջ մեծացվել է մսի և ոսկորների քանակը, քլորիդների համար՝ կերակրի աղի քանակը:

Նախքան քլորոպրենային թունավորումը, դրված բոլոր ութ կոնտրոլ փորձերում նկատվել է վերոհիշյալ հատկանիշը:

Տեղի սղության պատճառով աղյուսակ 1-ում բերում ենք կոնտրոլ փորձերից միայն երեքը: Մյուս կոնտրոլ փորձերը լիովին համապատասխանում են բերված փորձերին:

Աղյուսակ 1

(կոնտրոլ փորձեր)

Փորձերը	Նմուշները	1 ք-ի դիմաց	Ֆիտորացիան	Սեւաբարձրացիայի տոկոսը			Ծանոթություն
				9րդ	9միջ	Ֆոսֆատ	
17/XII 1955թ.	I 30ր	1,53	100	98,47	99,5	100	Սնունդը ֆոսֆորով և քլորով ազդատացնելու դեպքում
	II 30ր	1,70	111	98,46	99,5	100	
	III 30ր	1,70	112	98,48	99,4	100	
21/XII 1955թ.	I 30ր	2,93	110	97,33	95,24	74,3	Սնունդը ֆոսֆորով հարստացնելու դեպքում
	II 30ր	2,27	112	97,97	96,75	92,1	
	III 30ր	1,81	116	98,42	97,7	96,4	
3/I 1956թ.	I 30ր	2,3	133	98,24	98,36	66,2	Սնունդը քլորով հարստացնելու դեպքում
	II 30ր	1,9	136	98,60	98,11	77,5	
	III 30ր	1,6	137	98,83	98,45	82,2	

Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, թե 9րդ, թե 9միջ և թե՝ ֆոսֆորի ֆիտորացիան մեծ փոփոխություններ չի կրում, մինչդեռ սեւաբարձրացիայի տոկոսը ֆոսֆորի ազդատացման դեպքում հասնում է 100-ի, իսկ ափսոսման դեպքում՝ 66-ի (առաջին նմուշներում):

Քլորի սեւաբարձրացիայի տոկոսն ընդհանրապես բոլոր կոնտրոլ փորձերում ավելի սահմանափակ փոփոխությունների է ենթարկվում, բայց այնուամենայնիվ պարզ երևում է, որ հարստացման դեպքում կազմում է 95,24, իսկ ազդատացման դեպքում՝ 99,50%:

9/I—56 թ. սկսվեց քլորոպրենային թունավորումը 8,1 մգ/լ դոզայով—որակա՛ն երկու ժամ՝ առավոտյան ժամը 10-ին և ցերեկվա ժամը 3-ին:

Այդ ձևով թունավորումը շարունակվեց մինչև 8/III—56 թ., բայց երկուսի ֆունկցիայի մեջ ոչ մի փոփոխություն չնկատվեց: Այդ ժամանակամիջոցում շուրջ թունավորվեց 52 օր (չհաշված կիրակի օրերը) և դրվեց 8 փորձ: Այդ փորձերից երկուսը բերում ենք աղյուսակ 2-ում:

Ինչպես երևում է աղյուսակ 2-ից, ֆոսֆորի և քլորի պակասեցման դեպքում նրանց սեւաբարձրացիայի տոկոսը եղել է 83,07 և 99,71, իսկ ափսոսման դեպքում իջել է 56,77-ի և 98,31-ի: Բացի երկուսից ֆունկցիայից, շան մոտ թունավորման այլ երևույթներ ևս չէին նկատվում: Շունն արտակարգ առույգ էր, սկզբնական 18,75 կգ քաշի փոխարեն այժմ կշռում էր 20,00 կգ:

Վերահիշյալ հանգամանքները բերին այն եզրակացության, որ թունավորման դոզան 2 ժամ տևողությամբ շատ քիչ է շան մոտ օրեկ փոփոխություն առաջացնելու համար, այդ պատճառով էլ դոզան բարձրացրինք 20 մգ/լ-ի, պահպանելով 2 ժամ տևողությունն առանց ընդմիջումի: Քանի

Փորձեր	Նմուշները	1-րդ գիւրեղը	Ֆիլտրացի- ան	Ռեարսորրցիայի տոկոսը			Մանոթություն
				Չրի	Բլորի	Ֆոս- ֆորի	
10/II 1956թ.	I 30 ր II 30 ր III 30 ր	1,58 1,11 0,85	113 100 101	98,60 98,89 99,15	99,47 99,60 99,68	81,40 86,30 94,80	Սնունդը ֆոսֆորով և բլորով աղքատացնելու դեպքում
3/III 1956թ.	I 30 ր II 30 ր III 30 ր	2,20 2,03 2,03	111 116 123	98,01 98,25 98,29	98,31 98,34 98,65	56,77 68,21 73,54	Ֆոսֆորով և բլորով հարստացնելու դեպքում

որ հիպոսուլֆիտը ներարկվում է երիկամային ֆիլտրացիան որոշելու համար, իսկ նրա շնորհիվ վերանում է քլորոպրենի թունավոր հատկությունը, որոշվեց թունավորումը շարունակել առանց հիպոսուլֆիտի ներարկման այնքան ժամանակ, մինչև որ հանդես գան թունավորման ախտանշաններ, որից հետո միայն որոշել ֆիլտրացիայի փոփոխությունները, եթե այդպիսիք առաջանան:

9/III—56 թ. քլորոպրենի դոզան բարձրացվեց 20 մգ/լ-ի և շարունակվեց առանց հիպոսուլֆիտի ներարկման:

Թունավորման տասներորդ օրում նկատվեց շան տխուրժակի վատացում և ընկճված վիճակ, տասնչորսերորդ օրում նկատվեցին դեղնախտի նշաններ, մեզի և արյան պլազմայի գույնը փոխվեց մուգ դեղինի: Լեղաթթուների ու լեղապիղձենաների հայտնաբերման ռեակցիաները տալիս էին դրական արդյունք:

Թունավորման տասնհինգերորդ օրում աչքերի եղջերաթաղանթը դեղին գույն ստացավ, իսկ տասնվեցերորդ օրում դեղին էր նաև ամբողջ մաշկը: Շունն այնքան վատ վիճակում էր գտնվում, որ տեղից չէր շարժվում՝ նույնիսկ ուտելու կամ ջուր խմելու համար: Գեֆեկացիան կատարում էր պառկած վիճակում: Ծանր դեղնախտի արտաքին նշանների երևան գալը խոսում է լյարդի ֆունկցիայի խանգարման մասին, բայց քանի որ մեզ հետաքրքրում էր երիկամների ֆունկցիան, այդ պատճառով էլ 31/III—56 թ. գրվեց փորձ, որի արդյունքները բերում ենք աղյուսակ 3-ում: Չորս օր շունը ոչինչ չէր կերել, հետևապես կարելի էր սպասել քլորի և ֆոսֆորի ռեարսորրցիայի տոկոսի ուժեղ բարձրացում:

Փորձեր	Նմուշները	1-րդ գիւրեղը	Ֆիլտրացիան	Ռեարսորրցիայի տոկոսը		
				Չրի	Բլորի	Ֆոս- ֆորի
31/III 1956 թ.	I 30 ր II 30 ր III 30 ր	1,70 1,78 1,85	112 107 120	98,48 98,33 98,37	99,71 99,60 99,77	85,07 84,37 89,03

Ինչպես երևում է աղյուսակ 3-ից, քլորիդների ռեաբսորբցիայի տոկոսն իրոք որ խիստ բարձրացած է, իսկ ֆոսֆորի նկատմամբ նույնն ասելի կարելի: Թեպետև ֆոսֆորի ռեաբսորբցիայի տոկոսը բարձրացած է մինչև 85-ի, բայց տվյալ պայմաններում ավելի հավանական էր բարձրացում մինչև 100-ի: Չնայած դրան, չի կարելի ասել, թե երիկամի ֆունկցիան խանգարված է, քանի որ մյուս բոլոր հատկանիշները նորմալ են:

Այսպիսով՝ մենք եզրակացնում ենք, որ թունավորման այդ աստիճան ծանր վիճակում երիկամների ֆիլտրացիոն և ռեաբսորբցիոն ֆունկցիաների մեջ առանձին փոփոխություն չի կատարվել: Այդ եզրակացությունը հաստատվեց 7/IV—56 թ. փորձով, որի արդյունքներն այն աստիճան նման են նախորդ երկու փորձի արդյունքներին, որ հարկ չենք համարում բերել: Նախորդ երկու փորձերի ժամանակ ներարկված հիպոսուլֆիտի ազդեցությամբ իսպառ վերացել էին գեղնախտի նշանները և շունը իրեն շատ լավ էր զգում, այդ պատճառով էլ շարունակվեց քլորոպրենային թունավորումն առանց հիպոսուլֆիտի ներարկման, մինչև նորից ի հայտ գան թունավորման նշանները: 28/V—56 թ. նորից առկա էր ծանր գեղնախտ՝ իր բոլոր նշաններով: Շնչառությունը նախորդ օրերում արագացած էր, իսկ այդ օրը շնչում էր դանդաղ և խորը, նկատվում էին ցրնցումներ: Այդ վիճակում նորից որոշվեց երիկամների ֆունկցիան: Այս փորձը կատարված էր մեծ գծվարությունների հետ ոչ միայն այն պատճառով, որ շունը թուլացած — կախված էր կացոցի կապերից, այլև այն պատճառով, որ արյան անոթները չէին նշմարվում և արյան նմուշները վերցվում էին մեծ գծվարությամբ: Այդ ժամանակ մենք հնարավորություն չունեինք չափելու արյան ճնշումը, բայց կարելի է ենթադրել, որ նա խիստ բնական էր: Ընկած էր նաև արյան մակարդունակությունը, որի պատճառով արյան նմուշը վերցնելուց հետո կատարվում էր ենթամաշկային արնելցում և գծվարացնում հետագա նմուշների վերցնելը: Այնուամենայնիվ փորձը կատարվեց, որի արդյունքները բերված են աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4

Փորձերը	Նմուշները	1 րդ փուլի զիտություն	Ֆիլտրացիան	Ռեաբսորբցիայի տոկոսը		
				Չրի	Քլորի	Փոսֆորի
28/IV— 1956 թ.	I 30 ր	1,7	100	98,30	100	90
	II 30 ր	1,6	115	98,60	100	100
	III 30 ր	1,2	88	98,63	100	100

Աղյուսակի տվյալներից երևում է, որ մեզի մեջ չեն եղել ոչ քլորիդներ և ոչ էլ ֆոսֆատներ: Այդ ծանր պահին, երբ օրգանիզմը ոչ մի սնունդ չէր ընդունում, երիկամներում քլորի և ֆոսֆորի ռեաբսորբցիայի տոկոսը հասել է 100-ի և կանխվել է այդ կարևոր նյութերի կորուստը:

Այսպիսով, այս շան վրա երկու անգամ ստացվեց թունավորման ծանրը վիճակ, կատարված լյարդի ֆունկցիայի խանգարման հետ, բայց երի-

կամների ֆիլտրացիոն և ռեաբսորբցիոն ֆունկցիաների մեջ որևէ փոփոխություն չնկատվեց:

Շուն № 2, Չալիկ անունով, 51,45 կգ քաշով, էգ: Միզածորանների անջատման վիրահատումը կատարված էր 12 օր առաջ և վերքերը լրիվ ապաքինված էին:

Նորմալ շնչառությունը 1 ժամում 425 լիտր: Թունավորվել է օրական երկու ժամ, 8,8 մգ/լ դոզայով:

Փորձերն սկսվել են 10/1—56 թ.: Երիկամների ֆունկցիայի նորմալ ֆոնը որոշելու համար դրվել է 9 կոնտրոլ փորձ: Նկատվել են նույն օրինաչափությունները, ինչ որ № 1 շան վրա դրված կոնտրոլ փորձերում: Ֆոսֆորի և քլորի քանակները սննդի մեջ ավելացնելով, նրանց նկատմամբ ռեաբսորբցիայի տոկոսն իջել է, քչացնելու դեպքում նկատվել է հակառակը (աղյուսակ 5):

Աղյուսակ 5

Փորձերը	Նմուշները	1 ր-ի դիտարկումը	Ֆիլտրացիան	Ռեաբսորբցիայի տոկոսը			Ծանոթություն
				ջրի	քլորի	ֆոսֆորի	
14/1— 1956 թ.	I 30 ր	3,9	139	97,1	94,75	58,0	Սննդի մեջ քլորի ավելացման դեպքում
	II 30 ր	3,1	134	97,6	95,12	74,41	
	III 30 ր	3,2	141	97,7	95,43	72,38	
19/1— 1956 թ.	I 30 ր	0,73	67	98,9	99,75	94,37	Սննդի մեջ ֆոսֆորի և քլորի ազդատաղման դեպքում
	II 30 ր	0,97	98	99,01	99,75	96,07	
	III 30 ր	1,3	119	98,9	99,76	100	
26/1— 1956 թ.	I 30 ր	2,0	101	98,02	98,49	20,79	Սննդի մեջ ֆոսֆորի հարստացման դեպքում
	II 30 ր	1,5	109	98,62	99,39	47,89	
	III 30 ր	1,1	94	98,82	99,41	52,12	

Կոնտրոլ փորձերը վերջացնելուց հետո, 7/II—56 թ. մինչև 10/III—56 թ. կատարվել է ամենօրյա թունավորում նշված դոզայով: Այդ ժամանակամիջոցում երկու անգամ դրվել է փորձ և ստուգվել է երիկամների ֆունկցիան (20/II և 23/III—56 թթ.):

Այդ փորձերի արդյունքները հարկ չենք համարում բերել, քանի որ երկուսն էլ ցույց են տվել երիկամի միանգամայն նորմալ վիճակ: Թունավորման այլ երևույթներ նույնպես չեն նկատվել: Շան վիճակը եղել է լավ, ախորժակը նորմալ և քաշն ավելացել է 0,5 կգ-ով:

10/III—56 թ. քլորոսպրենի դոզան բարձրացվել է 20 մգ/լ-ի, թողնելով երկու ժամ տեղում թյունը:

Դրանից հինգ օր հետո (15/III—56 թ.) նկատվեցին գեղնախտի նշաններ: Այսպիսով գեղնախտի նշանները հանդես եկան 13 օր 8,8 մգ/լ (հաշված հիպոսուլֆիտի վերջին ներարկումից, որը տեղի է ունեցել 23/III—56 թ.) և 5 օր 20 մգ/լ դոզայով թունավորելուց հետո:

17/III— 56 թ. շունը շատ ծանր վիճակում էր. աչքի եղջերաթաղանթը, մաշկը, մեզր. արյան պլազման մուգ դեղին գույն ունեին: Շան ախորժակը շատ վատացավ, բացի մսից և ջրից ոչինչ չէր ընդունում: Մեծ մասամբ լինում էր պառկած: Երիկամների ֆունկցիան ստուգելու համար այդ օրը գրվեց փորձ:

19/III — 56 թ. մաշկի դեղնությունն անցել էր, ախորժակը համեմատաբար լավացել էր, բայց մյուս նշանները պահպանվում էին:

22/III/—56 թ. դեղնախտի տեսանելի նշաններն անհետացել էին, բայց մեզրատալիս էր լեղապիգմենտների թույլ ռեակցիա: Այդ օրը նորից գրվեց փորձ:

17/III և 22/III-ի փորձերի արդյունքները բերված են աղյուսակ 6-ում:
Աղյուսակ 6

Փորձերը	Նմուշները	1 ր-ի գերբեզը	Ֆիլտրացիան	Ռեաբսորբցիայի տոկոսը			Ծանոթություն
				ջրի	բլոթ	ֆոսֆորի	
17/III— 1956 թ.	I 30 ր	2,0	105	98,09	98,41	45,21	Ֆոսֆորի և բլորի ալեկացում
	II 30 ր	2,3	162	98,58	99,08	56,66	
	III 30 ր	2,5	211	98,81	99,32	72,41	
22/IV— 1956 թ.	I 30 ր	1,87	125	98,50	99,25	85,87	Ֆոսֆորի և բլորի պակասեցում
	II 30 ր	2,63	194	98,64	99,33	82,33	
	III 30 ր	1,70	143	98,81	99,52	88,19	

Աղյուսակ 6-ի տվյալներից երևում է, որ երիկամների ֆունկցիայի մեջ առանձին փոփոխություն չի կատարվել: Ֆոսֆորի ալեկացման դեպքում նրա ռեաբսորբցիայի տոկոսը եղել է 45,21, իսկ պակասեցման դեպքում՝ 85,87: Բլորի ալեկացման դեպքում նրա ռեաբսորբցիայի տոկոսը եղել է 98,41 իսկ պակասեցման դեպքում՝ 99,25:

22/III-ի փորձի հաջորդ օրը վերացավ նաև մեզրի ռեակցիան լեղապիգմենտների նկատմամբ: Շունը շատ առույգ էր և ախորժակը լավ:

